# ՈՐԱԿԱԿԱՆ ՆՈՐ ՓՈՒԼ՝ ՄԵՐ ԵՐԿՐՆԵՐԻ ԲԱԶՄԱԴԱՐՅԱ ՊԱՏՄԱԿԱՆ ԵՎ ԲԱՐԵԿԱՄԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

ծեւաչափերով փոխշահավետ նախագծերի իրականացման համար կարեւորեցին ինտեգրացիոն տարբեր գործընթացների շրջանակներում Վրաստանի եւ Հայաստանի շարունակական համագործակցությունը:

Երկու երկրների ղեկավարները մտքեր փոխանակեցին նաեւ տարածաշրջանային խնդիրների ու մարտահրավերների շուրջ՝ ընդգծելով տարածաշրջանի կայուն, խաղաղ եւ անվտանգ զարգացման կարեւորությունն ու այդ ուղղությամբ եւս համագործակցությունը:

Գիորգի Մարգվելաշվիլին եւ Սերժ Սարգսյանը հանդիպման արդյունքներն ամփոփեցին ԶԼՄ-ների առջեւ համատեղ հայտարարություններով:

***Ձեր ուշադրությանն ենք ներկայացնում Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլու եւ Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի հայտարարությունները:***

ՎՐԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՏԵՂ ՃԵՊԱՍՈՒԼԻՍՈՒՄ

## ԳԻՈՐԳԻ ՄԱՐԳՎԵԼԱՇՎԻԼԻ. «ՄԵԶ ՄԻԱՎՈՐՈՒՄ ԵՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԼԱՅՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ»

Այս խոսքերով համատեղ մամլո ասուլիսում իր ելույթն սկսեց Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին:

Նրա խոսքերով, Հայաստանի նախագահի ներկայիս այցը արտակարգ նշանակալից է մեր երկու երկրների միջեւ առկա բարեկամական եւ գործընկերային կապերի զարգացման համար:

Վրաստանի եւ Հայաստանի բազմադարյա պատմական եւ բարեկամական հարաբերությունների հաշվարկմամբ, մեր երկրները առանձնակի ուշադրություն են հատկացնում բարիդրացիական հարաբերությունների հետագա խորացմանը: Մեզ միավորում են ընդհանուր պահերը եւ համագործակցության մեծ հեռանկարները: Այսօրվա հանդիպմանը մանրամասն քննարկեցինք երկկողմ հարաբերությունների օրակարգի հրատապ հարցերն ու սահմանեցինք փոխշահավետ պայմանավորվածությունների ապագա ուղղությունները: Մեր հանդիպման նշանակալից մասը հատկացվեց Վրաստանի եւ Հայաստանի միջեւ տնտեսական համագործակցության հարցերին: Վրաստանը՝ որպես տարանցիկ երկիր, Եվրոպայի եւ Ասայի միջեւ կամուրջ է: Մեր երկրի այս աշխարհաքաղաքական դերն է'լ ավելի է ուժեղացնում Եվրամիության հետ ծեւակերպված Ասոցիացման համաձայնագիրն ու խոր եւ լայնածավալ ազատ առեւտրի մասին պայմանագիրը, որոնք նոր հնարավորություններ են ստեղծում մեր երկրամասում առեւտրա-տնտեսական կապերի խորացման համար: Մեծ ներուժ է նաեւ զբոսաշրջության զարգացման տեսանկյունից: Ողջունելի է վերջին ժամանակներում զբոսաշրջիկների հոսքի ավելացման միտումը: Այդ ուղղությամբ, մեր համագործակցությունը լայն հեռանկարներ ունի»,- հայտարարեց Գիորգի Մարգվելաշվիլին:

Վրաստանի նախագահի խոսքերով, հանդիպմանը խոսել են նաեւ Աբխազիայի եւ Ցխինվալիի տարածաշրջանի հետ Ռուսաստանի կնքած այսպես կոչված «Դաշնակցության եւ ռազմավարական գործընկերության մասին» պայմանագրի շուրջ: «Դա Վրաստանի տարածքի բռնագրավմանն ուղղված քայլ է եւ անմիջական սպառնալիք է ստեղծում Վրաստանի անվտանգությանը: Ես պարոն նախագահին հայտնեցի մեր անհանգստությունը, որը Վրաստանի ղեկավարության մոտ առաջացնում է բռնազավթված տարածքներում ստեղծված իրավիճակը: Մենք կրկին մեր հարգանքն արտահայտեցինք միջազգային իրավունքի եւ ՄԱԿ-ի հիմնարար սկզբունքներին ու հավաստեցինք մեր հավատարմությունը սահմանների անխախտելիության, վեճերի խաղաղ կարգավորման եւ փոխադարձ ինքնիշխանության ու տարածքային ամբողջականության նկատմամբ»,- հայտարարեց Գիորգի Մարգվելաշվիլին:

Վրաստանի նախագահը վստահություն հայտնեց, որ այս այցը կնպաստի Վրաստանի եւ Հայաստանի ապագա համագործակցության զարգացմանը:



## ՍԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆ. «ՄԵՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՒՄ ԵՆ ԼԻԱԿԱՏԱՐ ՓՈԽՎՍՏԱՀՈՒԹՅԱՄԲ»

«Շատ ուրախ եմ, որ սույն աշխատանքային այցի ընթացքում, նախագահ Մարգվելաշվիլու հետ հանգամանալից քննարկել ենք մեր հարաբերությունների օրակարգային հարցերը եւ նախանշել երկկողմ բազմաբնույթ համագործակցությունն առաջ մղելու նոր հեռանկարները:

Վստահ եմ, որ տեղյակ եք՝ այս այցի շրջանակներում մասնակցելու եմ նաեւ Հին Թբիլիսիի պատմական վայրում նոր շունչ ստացած հայկական առաջնորդանիստ Սուրբ Գեւորգ եկեղեցու վերաօծման արարողությանը: Շնորհակալություն եմ հայտնում Վրաստանի իշխանություններին այդ սրբավայրի վերականգնման աշխատանքներին իրենց աջակցությունը բերելու համար: Մենք էլ մեր հերթին հատուկ հոգածությամբ ենք վերաբերվում Հայաստանում առկա վրացական մշակութային ժառանգությանը, որի բարենորոգման ուղղությամբ աշխատանքներն ընթացքի մեջ են:

Վերադառնալով միջպետական օրակարգին՝ պետք է գոհունակությամբ փաստեմ, որ վերջին տարիներին հայ-վրացական հարաբերությունները դինամիկ զարգացում են ապրել եւ թեւակոխել են որակական նոր փուլ: Մեր երկրների միջեւ ընթացող բարձր մակարդակի ակտիվ քաղաքական երկխոսությունը եւ փոխայցելությունները խոսքերիս վառ վկայությունն են: Կարեւորում եմ նաեւ այն, որ հարաբերությունները իրականացվում են լիակատար փոխվստահության պայմաններում:

Պարոն նախագահի հետ մենք քննարկեցինք նաեւ այն ռազմավարական բնույթի նախագծերը, որոնց երկուստեք ծեռնամուխ ենք եղել: Կցանկանայի կարեւորել Բագրատաշեն-Սադախլո սահմանային «Բարեկամության կամրջի» շինարարությունը: Վստահ եմ, որ համատեղ ջանքերով մենք այն եւ մնացյալ բոլոր ծրագրերը հաջողությամբ ավարտին ենք հասցնելու՝ դրանով իսկ հավելյալ խթաններ ստեղծելով մեր երկրների առաջընթացի եւ տնտեսական վերելքի համար:

Աներկբա է, որ թե' Հայաստանը եւ թե' Վրաստանը բավարար ներուժ ունեն խորացնելու տնտեսական համագործակցությունը՝ իրագործելով միջպետական փաստաթղթերով ամրագրված իրենց պարտավորությունները: Ավելին, հավատացած եմ, որ մեր երկրների ներգրավումը տարբեր ինտեգրացիոն կառույցներում ոչ միայն չեն խոչընդոտում, այլեւ ավելացնում են մեր համակողմանի համագործակցության հնարավորությունները՝ նոր հորիզոններ ուրվագծելով երկկողմ եւ բազմակողմ փոխշահավետ ծրագրերի իրականացման համար:

Մենք անցյալ անգամ նույն այս դահլիճում պարոն նախագահի հետ խոսում էինք այն մասին, որ Հայաստանի անդամակցումը Եվրասիական տնտեսական միությանը եւ Վրաստանի կողմից ԵՄ Ասոցիացման համաձայնագրի ստորագրումը բացասական չեն անդրադառնա մեր տնտեսական հարաբերությունների վրա, այլ միայն դրական ազդեցություն կունենան: Եվ հիմա ուրախ եմ փաստելու, որ 2014թ. մեր առեւտրաշրջանառությունն ավելացել է, եւ նույն միտումը կա 2015թ. ինն ամիսների արդյունքով:

Անշուշտ, պարոն նախագահի հետ մենք քննարկեցինք նաեւ տարածաշրջանային նշանակության հարցեր: Կարեւոր եմ համարում ընդգծել, որ նման հարցերում առկա փոխըմբռնումը առաջին հերթին պայմանավորված է հայ-վրացական եղբայրության գերակայության գիտակցմամբ, ինչպես նաեւ երկարաժամկետ մտածելու կարողությամբ: Ավելին, մեր ժողովուրդների խորքային կապերի վրա խարսխված ակտիվ միջպետական երկխոսությունը լուրջ նախադրյալներ է ստեղծում համակողմանի գործընկերության նորանոր ուղղություններ նախանշելու համար:

Ամփոփելով խոսքս՝ թույլ տվեք եւս մեկ անգամ շնորհակալություն հայտնել այս հյուրընկալ հողում իմ գլխավորած պատվիրակությանը ջերմ ընդունելություն ցուցաբերելու համար»:

## «ՍԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆԸ ՎՐԱՍՏԱՆԻ ՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ՄԵԾ ՋԱՏԱԳՈՎՆ Է»




(Սկիզբը՝ 1-ին էջում)

քաղաքական, տնտեսական, հումանիտար եւ այլն, փոխգործակցության զարգացումը:

Հայաստանի նախագահը շնորհակալություն է հայտնել ս.թ. ապրիլի 24-ին Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի կապակցությամբ Երեւանում տեղի ունեցած Ցեղասպանության զոհերի հիշատակի ոգեկոչման միջոցառումներին Վրաստանի խորհրդարանի փոխխոսնակ Մանանա Կոբախիձեի մասնակցության համար:

Հանդիպմանը խորհրդարանի նախագահը նշեց, որ Վրաստանում ուշադրությամբ հետեւում են Հայաստանում սահմանադրության փոփոխությունների գործընթացին եւ տեղյակ են, որ փոփոխությունների նախագծի մշակման գործընթացում մասնագիտական խումբն ուսումնասիրել է նաեւ Վրաստանի փորձը:

Զրուցակիցները կարեւորեցին երկու պետությունների կողմից՝ միմյանց համար սկզբունքային նշանակություն ունեցող զգայուն հարցերի ու խնդիրների նկատմամբ հավասարակշիռ, շրջահայաց եւ նրբանկատ վերաբերմունքն ու փոխադարձ շահերի հարգումը:

Անդրադարձ եղավ նաեւ տարածաշրջանի խնդիրներին ու մարտահրավերներին: Նախագահ Սերժ Սարգսյանը կարեւորել է Վրաստանի դերը տարածաշրջանի անվտանգության եւ կայունության պահպանման գործում:

Հանդիպման ավարտից հետո, Վրաստանի խորհրդարանի նախագահը հայտարարեց. «Սովորական երեւույթ չէ, երբ այցելում են նախագահները, առավել եւս, երբ հյուրընկալում ենք հարեւան երկրի ղեկավարին: Դա պայմանավորված է նրանով, որ մեզ անհրաժեշտ է անհամեմատ շատ ավելի ինտենսիվ հարաբերություն եւ համագործակցություն: Մենք դրանում համաձայնվեցինք: Նախագահի գլխավորած պատվիրակությունում կային խորհրդարանի անդամներ, այդ թվում՝ Ազգային ժողովի փոխխոսնակ Հերմինե Նաղդալյանը, որը գլխավորում է Վրաստանի հետ բարեկամության խումբը: Պայմանավորվեցինք, որ է'լ ավելի կակտիվացնենք մեր խորհրդարանների համագործակցությունը: Ուրախ եմ, որ մեր երկրների միջեւ հարաբերություններն ընթանում են վերընթացով: Կան հարցեր, որոնցով մեր ռազմավարական մոտեցումները տարբերվում են, սակայն կարողանում ենք այդ տարբերակվող միտումների պայմաններում մեր փոխհարաբերությունները իրականացնել փոխնպաստավոր: Մենք հաշվի ենք առնելու տարածաշրջանում ստեղծված իրավիճակը, հաշվի ենք առնելու միմյանց վիճակը եւ չենք խանգարում միմյանց: Դա նշանակալից քաղաքական խնդիր է եւ, համոզված եմ, որ Վրաստանի եւ Հայաստանի միջեւ հարաբերություններն է'լ ավելի կխորանան եւ կընդլայնվեն»:

## ՍՏՈՐԱԳՐՎԵՑ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

Հայաստանի նախագահի Վրաստան կատարած այցի շրջանակներում, Վրաստանի եւ Հայաստանի միջեւ ստորագրվեց մշակութային համագործակցության ակտիվացման հուշագիր: Այն ստորագրեցին Հայաստանի մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանը եւ Վրաստանի մշակույթի եւ հուշարձանների պաշտպանության նախարար Մամուկա Գիորգաձեն:

Հուշագիրը նախատեսում է 2016-2018 թվականներին համագործակցություն այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են՝ թատրոնը, կինոն, գեղարվեստը, գրականությունը, հուշարձանների պաշտպանությունը, համատեղ մշակութային միջոցառումների անցկացումը:

## ՔՆՆԱՐԿՎԵԼ ԵՆ ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ՏԱՐԱՆՑԻԿ ՓՈԽԱԴՐՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Նոյեմբերի 2-ին ՀՀ էներգետիկայի եւ բնական պաշարների նախարար Երվանդ Զախարյանն այցելել է Վրաստան, որտեղ հանդիպում է ունեցել Վրաստանի փոխվարչապետ, էներգետիկայի նախարար Կախա Կալաձեի եւ գազի փոխադրման վրացական ընկերության գլխավոր տնօրեն Գիորգի Բենաշվիլու հետ: Հանդիպմանը մասնակցել է նաեւ «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ վարչության նախագահ, գլխավոր տնօրեն Վարդան Հարությունյանը:

Քննարկվել են ինչպես գազի անվտանգ եւ հուսալի տեղափոխման, այնպես էլ՝ տեխնիկական խնդիրներին առնչվող հարցեր:

Հաշվի առնելով Իրան-Հայաստան եւ Հայաստան-Վրաստան բարձրավոլտ լարման 400կվտ հզորությամբ գծի կառուցումը, որի աշխատանքները նախատեսվում է ավարտել 2018թ.-ին, հանդիպման ժամանակ քննարկվել են հյուսիս-հարավ եւ հարավ-հյուսիս ուղղություններով էլեկտրաէներգիայի տարանցիկ տեղափոխման հնարավորությունները:

ԿԻՆՈՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

# ՀԱՅԿԱԿԱՆ «ԱՆԱՎԱՐՏ ԹՌԻՉՔ» ՖԻԼՄԸ՝ ԹԲԻԼԻՍԻԻ ՄԵԾ ԷԿՐԱՆՆԵՐԻՆ

*Նոյեմբերի 5-ից Վրաստանի կինոթատրոններում, երկու շաբաթվա ընթացքում, ցուցադրվելու է երեւանցի երիտասարդ կինոռեժիսոր 33-ամյա Ելենա Արշակյանի «Անավարտ թռիչք» հայկական գեղարվեստական ֆիլմը: Մելոդրաման նվիրված է 2006 թվականին Երեւան-Սոչի ողբերգական ավիաչվերթի զոհերի հիշատակին եւ հիմնված է իրական փաստերի վրա: Ֆիլմը, հանգամանքների բերումով, ինքնաթիռում չհայտնված իրական հերոսուհու անավարտ սիրո պատմությունն է, որի համաձայնությամբ եւ էկրանավորվել է այն: Իսկ ֆիլմի առաջին պրեմիերան կայացել է ընթացիկ տարվա փետրվարին, Երեւանում:*

*Վրաստանի մայրաքաղաքում մինչեւ ֆիլմի մեծ էկրանին բարձրանալը, տեղի գլխավոր կինոթատրոններից մեկում՝ «Ամիրանիում», կայացավ թբիլիսյան պրեմիերան, որին ներկա էր Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Յուրի Վարդանյանը:*



Ասենք, որ հետխորհրդային շրջանում հայաստանյան ֆիլմի ցուցադրում՝ վրացական կինոթատրոններում, իհարկե՝ ոչ փառատոնի շրջանակներում, թերեւս չի եղել: Եվ սա առաջին փորձն է հաստատել այս ոճի կինոհամագործակցություն, մասնավորապես՝ Վրաստանի, Հայաստանի եւ Ռուսաստանի միջեւ: Կյանքի կոչողը Մոսկվայում գործող «Գրանի կինո» («Կինոեզրեր») ընկերությունն է, որն իր գործունեությունն սկսել է ապրիլ ամսից: Այդ ընկերության հիմնադիրը ծնունդով թբիլիսցի, արդեն 30 տարուց ավելի ռուսաստանաբնակ եւ կինոյի ասպարեզում առավել քան տաս տարիների փորձ ունեցող Սերգեյ Նազարովն է, ով վերջին ամիսներին հաճախ է լինում Թբիլիսիում: Հյուրընկալության պատրվակով հայրենի քաղաք է վերադարձել «Գրանի կինո» կազմակերպության մասնաճյուղը այստեղ եւս հիմնելու նպատակով: Այսօր արդեն, թբիլիսցի Մադինա Թադեւոսյանի գլխավորությամբ, գրասենյակն ունի իր աշխատակազմն ու առաջին ձեռքբերումները:

Սերգեյ Նազարովը, «Վրաստան»-ի հետ զրույցում խոստովանում է՝ հաջող սկիզբը կարող է պայմանավորել ցուցադրումներից հաջորդը՝ «Սուպերմամա» հայկական կինոկոմեդիան:

*- Սերգեյ, նախ շնորհավորում եմ «Կինոեզրերի» մուտքը, որ, կարծում ենք, ցանկալի իրողություն է Վրաստանի եւ, իհարկե, վիրահայերի համար ու հիանալի միջոց՝ հայ արդի կինոմշակույթը երկրին ներկայացնելու առումով: Փաստորեն, «Անավարտ թռիչքի» հանդեպ հանրության պահանջարկը, լեցուն դահլիճն ու կինոթատրոնի շահույթը կարո՞ղ են պայմանավորել Վրաստանում Ձեր «Կինոեզրերի» հետագա գործունեությունը:*

- Շնորհակալ եմ: Այո, ինչ խոսք: Եվ եթե այդպես լինի, ապա շարունակությունն անպայման շատ հետաքրքիր ու բովանդակալից կլինի, եւ, ի դեպ, ոչ միայն Հայաստանում նկարահանված ֆիլմերով սահմանափակվող: Օրինակ, Մոսկվայում, ուր «Կինոեզրերի» գործունեությունն արդեն հիմնավորվել ու շարունակվում է, ցուցադրել ենք «Անավարտ թռիչքը», Թինաթին Կաջրեիշվիլու «Հարսները» (Հարսանիք ճաղերից այն կողմ), «Սուպերմաման», այժմ պատրաստում ենք Օթար Իոսելիանու հանրահայտ շեդեւրի՝ «Զմռան երգի» ցուցադրումը, ապա նաեւ հանրաճանաչ մոսկվացի կինոռեժիսոր Ալեքսանդր Մինդաձեի «Սիրելի Հանս, թանկագին Պյոտրը», որի հետ օրերս ենք պայմանագիր կնքել եւ այն ցուցադրելու իրավունքն ունենք Վրաստանում ու ԱՊՀ երկրներում...

*- Իսկ ինչո՞ւ՝ որպես սկիզբ, հենց «Անավարտ թռիչքը», որքան գիտեմ ֆիլմը «Կինոեզրերի», այսպես ասած այցետոմսն է:*

- «Կինոեզրերն» իր գործունեությունը սկսեց հենց այս ֆիլմի ցուցադրությամբ: Ապրիլի 24-ն էր: Սա իմ խոնարհումն էր Հայոց Մեծ եղեռնի նահատակների առջեւ: Ֆիլմը խորհրդանշական էր, քանի որ կրկին խոսվում էր խեղաթյուրված ու ընդհատված ճակատագրերի մասին, թեեւ այս անգամ «ոճրագործն» ինքը բնությունն էր, որ խլել էր 113 մարդկային կյանք: Բայցեւայնպես, այս ֆիլմում խավարի մեջ լույսի ու հույսի մի մեծ շառավիղ, շարունակվող կյանք է հայտնվում, ինչը հնարավոր չէ անարցունք դիտել:

*- Պատմեք մի փոքր ֆիլմի, նրա ստեղծողների մասին:*

- Սա մի զույգի իրական ու ընդհատված, բայցեւ շարունակվող մեծ սիրո պատմությունն է, որի հիմքում ազնվությունն է, մաքրությունը, խիզախությունը, բայց նաեւ՝ արգելքները, ճակատագիրը ու հետո արդեն՝ հավերժության ճանապարհը: Զույգի պատմությունը գրելիս՝ սցենարիստ Անահիտ Մխիթարյանը գրեթե չի փոփոխել պատմությունը եւ միայն գեղարվեստական լուծումներ տվել դրանց: Պատմությունն ավելի քան զգացմունքային է, բայց, աղետի զոհերի ապրումները հաշվի առնելով, հույզերի սահմանը չի հատվել: Ֆիլմի ռեժիսորը երիտասարդ ու տաղանդավոր 33-ամյա Ելենա Արշակյանն է, ով հիանալի անձնավորություն է նաեւ, ում լավ ճանաչում եւ սիրով համագործակցում եմ: Մելոդրամայում նկարահանվել են Տաթեւ Հովակիմյանը, Տիգրան Մակարյանը, Սերժ Ավեդիքյանը, Լուիզա Ղամբարյանը, Գայանե Ասլամազյանը, այլք: Նկարահանումները տեղի են ունեցել Երեւանում, Սեւանում, Սոչիում, Գյումրիում եւ Ծաղկաձորում:

*- Կոնկրետ ո՞ր կինոթատրոններում, ի՞նչ լեզվով է հնարավոր դիտումը:*

- Վրաստանի մայրաքաղաքի «Ռուսթավելի», «Թբիլիսի-Մոլ», «Իթս-Պոինտ» եւ մասնավոր այլ կինոթատրոններում, ժամակարգն ու օրերը նշված են կինոսայթերում: «Ամիրանիում» փառատոնային օրեր են, թեեւ հարկ է նշել, որ հենց այս կինոթատրոնում հոկտեմբերի 23-ին կայացավ ֆիլմի պրեմիերան: Ի դեպ, մանրամասներին եւ հետագա ծրագրերի մասին կարող եք ծանոթանալ ֆեյսբուքյան մեր էջում՝ «Грани Кино Тбилиси - კინოს წახნაგები»: Ֆիլմի լեզուն ռուսերենն է: Ասեմ նաեւ, որ ձայնավորումն իրականացվել է ռուս արհեստավարժ դերասանների կողմից, Մոսկվայում:

Ինչ վերաբերում է շրջաններին,- շարունակեց Սերգեյը, - ապա մենք եղել ենք Սամցխե-Ջավախեթիում, Քվեմո-Քարթլիում, մեծ աշխատանք տարել, եւ, ի դեպ, երախտագիտությունս պիտի հայտնեմ հատկապես, Ախալքալաքիի, Նինոծմինդայի, Ախալցիխեի, Մառնեուլիի ու Բոլնիսիի շրջանների ղեկավարներին, ովքեր սատարում էին մեզ յուրաքանչյուր հարցում: Բայց խոչընդոտողն այստեղ ոչ այդքան ցանկությունը, որքան կինոթատրոնների, ցավոք, անբարենպաստ պայմաններն են: Ասեմ, որ միակ շատ բարձր մակարդակի կինոթատրոնը տեսանք միայն Նինոծմինդայում:

*- Սերգեյ, խոսեցիք Ալեքսանդր Մինդաձեի, Թինաթին Կաջրեիշվիլու, Ելենա Արշակյանի եւ, վերջապես, համաշխարհային մեծության՝ Օթար Իոսելիանու մասին: Ինչպես ե՞ք հաջողացնում նրանց հետ համագործակցությունը:*

- Թե որ առավելությանս համար են նրանք ինձ վստահում՝ դժվարանում եմ պատասխանել: Ուղղակի ասեմ, որ նախ ֆիլմերն եմ ընտրում՝ ըստ բովանդակության, իմ նախասիրությամբ: Կյանքում ու նաեւ արվեստում բացասականն այնքան է արմատավորվել ու իշխում, որ ես անընդհատ դրականի, գեղեցիկի փնտրտուքի մեջ եմ ու դա գտնում եմ հատկապես մեր եւ ոչ ամերիկյան ֆիլմերի մեջ: Նախկինում ես աշխատում էի «Կինոն առանց սահմանների», այժմ գլխավորում եմ՝ «Կինոեզրեր» ընկերությունը, որովհետեւ գտնում եմ, որ ամեն ինչ իր եզրերի ու շրջանակների մեջ է գեղեցիկ, հատկապես՝ արվեստը: Նույնիսկ իմ գործում, ուր կոմերցիոն շահույթ կա, չի կարելի խոսել միայն չոր թվերի մասին: Օրինակ, Թինայի ֆիլմն առաջինն էր, 2008-ի ռուս-վրացական պատերազմից հետո, որ ցուցադրվեց Մոսկվայում եւ, ի դեպ, մեծ հաջողություն ունեցավ: Ռուսական կինոասպարեզ դուրս գալուց հետո, այն նվաճեց միջազգային երկու մրցանակ: Այժմ խնդրում են, որպեսզի ֆիլմը ցուցադրենք Ուկրաինայում, Բելառուսում, Ղազախստանում, նորից՝ Վրաստանում:

Եվ, իհարկե, Օթար Իոսելիանին ու նրա «Զմռան երգը»... սա երեւի իմ ամենամեծ ձեռքբերումն է,- շարունակում է Սերգեյը,- եւ պատկերացրեք, ոչ այդքան ֆիլմը իրավասությանս տակ առնելու, այլեւ Մեծն ռեժիսորի հետ իմ վաղեմի ծանոթության առումով: Ֆրանսիայում գործող այս լեգենդար արվեստագետը կինոյի օրինատերերին երաշխավորեց վստահել ինձ ֆիլմը՝ շեշտելով, որ ինձ հայրաբար է մոտենում: Ֆիլմը Թբիլիսիում դեռ չի ցուցադրվել, միայն՝ Բաթումիում եւ այն էլ՝ կինոփառատոնի շրջանակներում:

*- Ինչի՞ մասին է այն, ե՞րբ է նախատեսվում պրեմիերան:*

- Այն շոշափում է Կովկասյան պատերազմների ու դրանց հետեւանքների թեման: Ֆիլմը գեղեցիկ է, ինչպես եւ Իոսելիանու ֆիլմերից յուրաքանչյուրը: Այժմ աշխատում ենք ֆիլմի թրեյլերի վրա, նոյեմբերի վերջին ֆիլմը դուրս կգա մեծ էկրան: Եվ իհարկե, լիահույս եմ, որ պրեմիերան կկայանա հենց Թբիլիսիում: Սա մեր կողմից ոչ միայն հարգանքի տուրք է հռչակավոր ռեժիսորի հանդեպ, ով արդեն կրում է «Աշխարհի քաղաքացի» տիտղոսը, այլեւ վրաց ժողովրդի՝ ամբողջապես:

*- Սերգեյ, իսկ վրացական կինոն արտահանել Հայաստան մտադի՞ր եք կամ փորձե՞լ եք:*

- Դեռ բանակցային փուլում ենք: Չեմ ուզում հիասթափություն ապրել անհաջող մեկ փորձից եւ համագործակցության նոր եզրեր եմ փնտրում: Այնպես որ, մեկնաբանությունն այս պահին տեղին չէր լինի:

Ես մի փոքր բարդ քաղաքականություն եմ ընտրել,- շարունակում է Սերգեյը,- ունեմ իմ շրջանակները, սկզբունքները: Ուստի, նվաճումներին զուգահեռ, ժամանակ առ ժամանակ անհաջողություններն անխուսափելի են: Բայց սա ինձ, Թբիլիսիում այս ամենի գլուխ կանգնած մեր ընկերության Թբիլիսիի ներկայացուցիչ Մադինային, չի կոտրում: Մենք համոզված ենք, որ, ի վերջո, մշակույթը ու նրա ճյուղերից մեր նախընտրածը՝ կինոն, կարող են հզոր լծակ դառնալ ժողովուրդների եւ մարդկանց բարեկամության ու փոխադարձ սիրո եւ առանց անավարտ թռիչքների...

*Զրուցեց*
*ԳԱՅԱՆԵ ԲՈՍՏԱՆՋՅԱՆԸ*

ԴՊՐՈՑ

# «ԵՍ ՀՊԱՐՏ ԵՄ, ՈՐ ԱՇԱԿԵՐՏ ԵՄ ԴԱՐՁԵԼ»

*Ամիս ու կես է անցել ընթացիկ՝ 2015-2016 ուսումնական տարվանից: Ու այսօր, Թբիլիսիի թիվ 104 հանրակրթական հայկական դպրոցի առաջին դասարանցիները՝ 27 անուշիկ մանչուկներ ու աղջնակներ, իրենց սիրելի ուսուցչուհու՝ արդեն բազում տարիներ ուսուցչի բարձր կոչմանը հավատարիմ, վաստակաշատ, փորձառու մանկավարժ Լամարա Ղազարյանի հետ, կանգնած են բեմին: Սա առաջին դասարանցիների անդրանիկ միջոցառումն է, ուր նրանք, ի տես դպրոցի մանկավարժների, ի տես պատվավոր հյուրերի ու ծնողների, ստանալու են աշակերտ կոչվելու «Հավաստագիր»...*



Փոքրիկները, թեպետեւ հուզված, բայց կարողացան ցուցադրել իրենց զարմանալի շնորհները՝ անսխալ, անշփոթ ասմունքելու, պատմելու, երկարաշունչ խոսք ասելու այն կարողությունները, որ հայտնաբերվել ու մշակվել էր իրենց առաջին ուսուցչուհու՝ «ընկեր Լամարայի» նվիրված աշխատանքի շնորհիվ: Ծափերի ներքո, դպրոցի 10-րդ դասարանցիները կրտսեր ընկերներին հանձնեցին «Հավաստագրերը»:

Բնականաբար, օրվա հերոսների մանուկ հոգիներում դեռեւս նիրհում էր օրվա կարեւորության ճշմարիտ ու բարձր գիտակցումը, որ գալու է տարիների հետ՝ այս պահերի անմոռանալի հիշողություններով... Փոխարենը, օրվա խորհուրդն իր ողջ պատասխանատվությամբ կարեւորվեց ներկաների կողմից:

Դպրոցի տնօրեն Իրինա Ժամկոչյանն ի սրտե ողջունեց փոքրիկներին, շնորհակալություն հայտնեց նրանց ուսուցչուհուն ու միջոցառմանը ներկա ծնողներին՝ գնահատելով վերջիններիս ցուցաբերած ողջամտությունը զավակներին հայեցի կրթության տալու առումով:

Վիրահայոց թեմի Քվեմո Քարթլիի տարածաշրջանի հոգեւոր հովիվ-տեսուչ Տեր Խորեն վարդապետ Հովհաննիսյանի, Վրաստանում Հայաստանի դեսպանության երկրորդ քարտուղար Էլինա Մկրտչյանի, «Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրթյանի, «Վիրահայերի միության» խորհրդի անդամ Մարի Առաքելովայի, պրոֆեսոր Էմմա Ախտյանի՝ սաներին հղված բարեմաղթանքները հնչեցին իբրեւ պատգամ ու հույս, որ փոքրիկները կդառնան մեր ազգային արժեքների ժառանգորդը, դրանք հարստացնողն ու փոխանցողը եւ կլինեն Վրաստան երկրի ազնիվ քաղաքացիներ:

Միջոցառմանը ներկա էին Վիրահայոց թեմի նախակրթարանի տնօրեն Եվգենյա Մարկոսյանը, «Վիրահայերի միության» նախագահ, Պ.Ադամյանի անվան պետհայդրամայի թատրոնի դերասան Նարեկ Բայանդուրյանը, Վիրահայոց թեմի առաջնորդի օգնական Գեւորգ սարկավագ Անտոնյանը:

*ՋՈՒԼԻԵՏԱ ԲԱՂԱԼՅԱՆ*

# ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

## ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑԻՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ

*Նոյեմբերի 3-ին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանն ընդունեց Հարավային Կովկասի ու Վրաստանի ճգնաժամային հարցերով Եվրամիության հատուկ ներկայացուցիչ Հերբերտ Զալբերին:*



Հյուրի խնդրանքով, Սերժ Սարգսյանը ներկայացրեց իր մոտեցումները ԼՂ հիմնախնդրի լուծման բանակցային գործընթացի վերջին զարգացումների վերաբերյալ: Սերժ Սարգսյանը կարեւորեց միջազգային հանրության եւ իրավասու միջազգային կառույցների ժամանակին ու հասցեական, այլ ոչ թե ընդհանրական հայտարարությունները հրադադարի խախտումների կապակցությամբ, ինչպես նաեւ որոշակի միջոցների ձեռնարկումը, որոնք կկանխեն հետագա որեւէ սադրանք:

Հանդիպմանը երկուստեք ընդգծվել է, որ ԼՂ հիմնախնդիրը ռազմական լուծում չունի, եւ այն կարող է լուծվել միայն կողմերի համար ընդունելի փոխզիջումների հիման վրա:

## ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ԷԻՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ



*Նոյեմբերի 5-ին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը հանդիպում ունեցավ երկօրյա պաշտոնական այցով Հայաստանում գտնվող Ռուսաստանի Դաշնության Դաշնային ժողովի Դաշնության խորհրդի նախագահ Վալենտինա Մատվիենկոյի գլխավորած պատվիրակության հետ:*

Հանդիպմանը կողմերը քննարկեցին հայ-ռուսական բազմաբնույթ օրակարգը եւ երկկողմ ռազմավարական գործընկերությունն ավելի խորացնելու ու ամրապնդելու ուղղությամբ հետագա քայլերը եւ, այդ առնչությամբ, երկու երկրների օրենսդիր մարմինների դերը: Այդ համատեքստում զրուցակիցները բարձր գնահատեցին հայ-ռուսական միջխորհրդարանական հանձնաժողովի գործունեությունը:

Զրուցակիցները մտքեր փոխանակեցին նաեւ միջազգային արդի խնդիրների շուրջ, անդրադարձան տարածաշրջանի մարտահրավերներին, ԼՂ հիմնախնդրի բանակցային գործընթացի ներկա փուլին:

Պաշտոնական այցի շրջանակներում, Ռուսաստանի Դաշնության Դաշնային ժողովի Դաշնության խորհրդի նախագահ Վալենտինա Մատվիենկոյի գլխավորած պատվիրակությունը հանդիպումներ ունեցավ նաեւ Ն.Ս.Օ.Ս.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց կաթողիկոսի, Հայաստանի վարչապետ Հովիկ Աբրահամյանի, Հայաստանի ԱԺ նախագահ Գալուստ Սահակյանի հետ:

Պաշտոնական այցով Հայաստան ժամանած ՌԴ Դաշնային ժողովի Դաշնության խորհրդի նախագահ Վալենտինա Մատվիենկոյի գլխավորած պատվիրակությունը, ՀՀ ԱԺ նախագահի տեղակալ Հերմինե Նաղդալյանի ուղեկցությամբ, նոյեմբերի 3-ին այցելեց Ծիծեռնակաբերդի Հայոց ցեղասպանության հուշահամալիր՝ լռությամբ ու խոնարհումով հարգելու սուրբ նահատակների հիշատակը:

## ՄԱՅՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՍՏ՝ ՉԱՇԽԱՏՈՂ ՄԱՅՐԵՐԻՆ

*Հայաստանում 2016թ. առաջին անգամ մայրության նպաստ կստանան նաեւ չաշխատող մայրերը: Այս մասին Ազգային ժողովում, ՀՀ 2016թ. պետական բյուջեի նախագծի քննարկման ժամանակ, ասաց ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարար Արտեմ Ասատրյանը:*



«Շահառուների թիվը կանխատեսվել է 30 հազար, իսկ համապատասխան բյուջետային ծախսը կկազմի շուրջ 3,9 միլիարդ դրամ: Փաստորեն, այս ծրագրի միջոցով մենք լուծում ենք տալիս այն խնդրին, որը բավականին երկար ժամանակ քննարկվում էր: Մասնավորապես, բուռն քննարկման առարկա էր երեխայի ծննդյան եւ խնամքի հետ կապված վճարումներն ինչպես իրականացնել՝ բոլորի՞ն, թե՞ միայն աշխատող մայրերին»,- ասաց Ասատրյանը:

Նախարարը հստակեցրեց, որ կառավարությունը սահմանել է մայրության նպաստ նաեւ չաշխատող մայրերի համար, որով նախատեսվել է, որ չաշխատող մայրը, ունենալով ծննդյան հավաստագիրը, կունենա այդ գումարի ստացման իրավունք, որը 2016թ. հունվարից կկազմի շուրջ 126 հազար 600 դրամ: «Սրանով մենք ամբողջությամբ կարգավորում ենք այն հարցը, որ բոլոր ապագա մայրերը ունենում են նաեւ հստակ ֆինանսական աջակցություն պետության կողմից»,- ընդգծեց Ասատրյանը:

Նա հավելեց նաեւ, որ ծննդյան միանվագ նպաստը եւս տրվում է բոլորին, անկախ աշխատելու կամ չաշխատելու հանգամանքից: «Առաջին եւ երկրորդ երեխաների համար պետությունը տրամադրում է 50 հազար դրամ, երրորդ եւ չորրորդ երեխայի համար՝ 1 միլիոն դրամ, հինգերորդ եւ հաջորդ երեխայի համար՝ 1,5 միլիոն դրամ»,- մանրամասնեց նախարարը:

## ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐՎԵՑԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ



*Հայաստանի սփյուռքի նախարարությունում տեղի է ունեցել նախարարին կից ատյանի հերթական նիստը:*

Նիստում նշվեց, որ «Արի տուն» հայրենաճանաչության 2015թ. ծրագիրն իրականացվեց հաջողությամբ: Հազարից ավելի երիտասարդներ այցելեցին Հայաստան: Ծրագրի յուրաքանչյուր օրը երիտասարդներն սկսել են հայերենի ուսուցմամբ: Ծրագրի մասնակիցները, ինչպես ամեն տարի, այցելեցին Հայաստանի պատմամշակութային վայրեր՝ առավել ծանոթանալով հայ ժողովրդի պատմությանն ու մշակույթին: Հայաստանյան ընտանիքներում, 9-օրյա հյուրընկալությունից հետո, վերջին 5 օրն անցկացրեցին Ծաղկաձորի «Արի տուն» ճամբարում, որտեղ կազմակերպվեցին հայ երգի ու պարի ուսուցման դասեր»:

Նիստում քննարկվեցին նաեւ սփյուռքի նախարարարության «Սփյուռք-ամառային դպրոց 2015» ծրագրի արդյունքները: Նշվեց, որ այս տարի ամառային դպրոց ընդունել է 216 մասնակից՝ 21 երկրից: Հաջողությամբ ընթացել են ամառային դպրոցի 6 ուղղություններն էլ: Դասավանդման գործընթացում ներգրավված են եղել ԵՊՀ-ի այլ բուհերի, ինչպես նաեւ սփյուռքից հրավիրված մասնագետներ մշակութային գործիչներ:

Նիստում հանրագումարվեցին նաեւ սփյուռքի նախարարության «Երգում ենք Կոմիտաս» համահայկական փառատոնի իրականացման արդյունքները:

Նշվեց, որ փառատոնին այս տարի մասնակցել է 12 երկրից ժամանած շուրջ 235 կատարող, այդ թվում՝ օտարազգիներ: Համահայկական մշակութային փառատոնը բաղկացած է եղել երկու մասից՝ «Ստամբուլի հայ համայնքի օրերը Հայաստանում» եւ «Երգում ենք Կոմիտաս» փառատոնը: Այնուհետ ցուցադրվել է «Կոմիտաս» փառատոնի մասին պատմող ֆիլմ:

Նիստի արդյունքներն ամփոփեց սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը:

## ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԳՐԱՆՑՎԵԼ Է 75 ՀԱԶԱՐ ԳՈՐԾԱԶՈՒՐԿ

*Հայաստանում վերջին տարիներին ավելացել է գործազրկության թիվը՝ պայմանավորված երկրում՝ աշխարհում տեղի ունեցող տնտեսական փոփոխություններով: Այդ մասին հայտնեցին Հայաստանի Զբաղվածության պետական գործակալության աշխատաշուկայի վերլուծության կանխատեսման բաժնից:*

Տեղեկատվության համաձայն, Հայաստանում պաշտոնական տվյալներով, կա զբաղվածության տարբեր կենտրոններում գրանցված 75 հազար գործազուրկ:

Երիտասարդների շրջանում գործազրկությունն ավելի մեծ տոկոս է կազմում կանանց մոտ, քանի որ մինչեւ 29 տարեկան աղջիկներն ավելի քիչ են փնտրում աշխատանք:

Զբաղվածության պետական գործակալությունը տարբեր ծրագրեր է իրականացնում, որոնք ուղղված են աշխատաշուկայի լարվածության մեղմմանը: Գործակալության ծառայություններից օգտվող անձանց շուրջ 70 տոկոսին հաջողվում է աշխատանք գտնել:

Հատուկ երիտասարդ մասնագետների համար գործում է ծրագիր, որով աշխատանքային փորձ չունեցող երիտասարդները կարող են իրենց մասնագիտությանը համապատասխան երեք ամիս տեւողությամբ պրակտիկա անցնել որեւէ կազմակերպությունում:

### ԿՆՔՎԵԼ Է ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

***Նոյեմբերի 4-ին Հայաստանի եւ Եվրասիական զարգացման բանկի միջեւ ստորագրվել է «Եվրասիական տնտեսական ընկերակցության հակաճգնաժամային հիմնադրամի միջոցներից ֆինանսական վարկի տրամադրման մասին» համաձայնագիր, որով նախատեսվում է Հայաստանին տրամադրել 300 միլիոն ԱՄՆ դոլարի չափով բյուջետային աջակցության վարկ, որը կտրամադրվի երեք մասնաբաժիններով՝ յուրաքանչյուրը 100 մլն ԱՄՆ դոլարի չափով: Վարկի տարեկան տոկոսադրույքը կազմում է 2,1%, այն տրամադրվում է 20 տարի մարման ժամկետով, որից 10-ը՝ արտոնյալ:***

***Վարկային միջոցները կնպաստեն էներգետիկ հատվածի ֆինանսական կայունության բարձրացմանը, բիզնեսի վարման պայմանների բարելավմանը, ինչպես նաեւ պետական ֆինանսների կառավարման արդյունավետության բարձրացմանը:***

### ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ՝ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

***Հայաստանն առաջին քայլերն է իրականացնում գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրման ուղղությամբ:***

***Այս մասին Ազգային ժողովում, Հայաստանի 2016թ. պետական բյուջեի նախագծի քննարկմանը, ասաց Հայաստանի գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը: «Մենք այդ ուղղությամբ աշխատում ենք «Ինգո Արմենիա» ապահովագրական ընկերության հետ արդեն երկու տարի: Այս տարվանից սկսել ենք աշխատել KfW բանկի հետ: Նրանք խորհրդատվություն են մատուցում մեզ եւ շուտով առաջարկներ կներկայացնեն, թե ինչ քայլեր պետք է արվեն»,- նշեց նախարարը:***

***Նա հավելեց, որ գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրումը շատ բարդ եւ աշխատատար գործընթաց է: «Սա մեկ տարվա կամ տասը տարվա խնդիր չէ: Նույնիսկ կան եվրոպական զարգացած երկրներ, որտեղ ապահովագրված է գյուղատնտեսական ոլորտի մի մասը միայն: Օրինակ, Ֆրանսիայում միայն բուսաբուծությունն է ապահովագրվում, իսկ անասնապահության ոլորտը՝ ոչ»,- մանրամասնեց Կարապետյանը:***

### ՏՐԱՄԱԴՐՎԵԼ Է ՄԵԾ ԾԱՎԱԼԻ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ

***Այս տարվա հունվար-սեպտեմբերին մարդասիրական օգնության կարգով Հայաստան են ներմուծվել 2 891,4 տոննա ապրանքներ, որոնց արժեքը կազմել է 14,7 մլրդ դրամ կամ 30,8 մլն ԱՄՆ դոլար, որը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, նվազել է 24,2 տոկոսով:***

***Հայաստանի ազգային վիճակագրական ծառայության տվյալներով, ամենամեծ՝ 9 մլն 198,8 հազար դոլար արժեքով մարդասիրական օգնություն է տրամադրել Ավստրալիան. ցուցանիշը, 2014թ. առաջին ինն ամիսների համեմատ, ավելացել է 36,3 տոկոսով, այնուհետեւ՝ ԱՄՆ-ը՝ 5 մլն 872 հազար դոլար ծավալով (նվազումը՝ 5,2 տոկոս), Չինաստանը՝ 3 մլն 505,1 հազար դոլար ծավալով (նվազումը՝ 15,2 տոկոս), Հնդկաստանը՝ 1 մլն 524,9 հազար դոլար ծավալով (աճը՝ 57,7 տոկոս), Իտալիան՝ 1 մլն 276,8 հազար դոլար ծավալով (աճը՝ 33,3 տոկոս):***

### ԵՐԵՎԱՆՅԱՆ ԱՎՏՈԲՈՒՍԻ ՎԹԱՐ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

***Նոյեմբերի 3-ին, Ռուսաստանի Տուլայի մոտակայքում, Մոսկվա-Երեւան երթուղու «Կինգ Դելյուքս» ՍՊԸ տրանսպորտային ընկերությանը պատկանող «Higer» մակնիշի 510 OP 61 պետհամարանիշով ավտոբուսը դուրս է եկել երթեւեկելի մասից եւ շրջվել: ՃՏՊ-ի հետեւանքով, զոհվել է 8, տուժել՝ Հայաստանի 43 քաղաքացի:***

***Տուլայի դատարանը նոյեմբերի 4-ին կալանքի տակ է վերցրել «Մոսկվա-Երեւան» ավտոբուսի վարորդ Գառնիկ Հարությունյանին:***

## ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

### ՆՈՅԵՄԲԵՐ



*7.11.2015. Հրեշտակապետեր Գաբրիելի եւ Միքայելի եւ ողջ երկնային զորքի հիշատակության օր*

Հայ եկեղեցու Հրեշտակաբանության համաձայն, հրեշտակներն անմարմին գոյացություններ են, իմացական, անձնիշխան, մշտաշարժ, անսեռ, անմահ եւ սպասավոր Աստծուն, որոնք իրականցնում են Տիրոջ կամքը:

Գաբրիել անունը, որ նշանակում է «Աստծո այր», Բարձրյալի անմիջական պաշտոնյան է, որին վերապահված է Տիրոջ վերին խորհուրդներն ավետարանելու շնորհ:

Միքայել անունը, որ նշանակում է «Ո՞վ է Աստծուն նման», Երկնավոր Արքայի փառքի եւ նրա ժողովրդի պաշտպանության համար մարտնչողն է, որին տրված է կառավարելու եւ թագավորելու շնորհ:

*9.11.2015. Անտիոքի Սուրբ Մելիտոս Հայրապետի, Մինաս Եգիպտացու եւ մյուս Մելիտոս եպիսկոպոսի, Բուրաս քահանայի եւ Շինու սարկավագի հիշատակության օր*

*10.11.2015. Հիշատակ Սուրբ Դեմետրիոս վկայի եւ Բասիլիսկոս քահանայի*

*12.11.2015. Սուրբ Գուրիասի, Սամունասի, Աբիբ սարկավագի, Ռոմանոս մենակյացի, Մանուկ խոստովանողի եւ Հյուսիքոս զինվորի հիշատակության օր*

## ՆՈՐԱՄՈՒԾՈՒԹՅՈՒՆ

# ՔՆՆՈՒԹՅՈՒՆ՝ ՀՐԱԶԵՆԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՈՒ ՊԱՀՄԱՆ ՀԱՄԱՐ



***Ընթացիկ տարվա նոյեմբերի 1-ից, այն քաղաքացիները, ովքեր կցանկանան ձեռք բերել քաղաքացիական հրազեն կամ գազի ատրճանակ, զենքի հետ վարվելու քննություն են հանձնելու Վրաստանի ՆԳ նախարարության սպասարկման գործակալությունում:***

Նոյեմբերի 3-ին ՆԳ նախարարության սպասարկման գործակալությունում կայացավ հրազենի գրանցման քննաթերթիկների շնորհանդեսը, որին ներկա էր ներքին գործերի փոխնախարար Արչիլ Թալաքվաձեն:

Շնորհանդեսին նշվեց, որ քննություն են հանձնելու պաշտպանական կարճափող հրացան, գազի ատրճանակ, մարզական եւ որսորդական հրազեն գնել ցանկացողները: Զենքը կարող են գրանցել միայն քննությունը հաջողությամբ հանձնածները:

Քննություն չեն հանձնելու այն քաղաքացիները, ովքեր իրենց զենքը գրանցել են մինչեւ 2015 թվականի նոյեմբերի մեկը: Հրազեն ունեցողները նոր զենքի գնման դեպքում, անցնելու են թեստավորում, թեպետ նույն կարգի հրազենի գնման դեպքում, նրանք ազատվում են քննությունը հանձնելուց:

Քննությունը հանձնելու համար ՆԳ նախարարության սպասարկման գործակալությանը հարկ է հանձնել հոգեկան առողջության մասին տեղեկանք, անձը հաստատող փաստաթուղթ ու հրազենի գնումը հաստատող կտրոնը:

Վրաստանի քաղաքացիներն ու օտարերկրացիները օրինականորեն հրազենը կարող են գնել միայն այն խանութներում, որոնք ունեն հրազեն վաճառելու հատուկ հավաստագիր, ընդ որում, գնելիս պետք է ներկայացնել դրա թույլտվությունը:

## ՓԱՌԱՏՈՆ



# ԱՆՆԱ ՍԱՖԱՐՈՎԱՆ ԼԱՎԱԳՈՒՅՆՆ ԷՐ ՊԱՐԱՅԻՆ ՕԼԻՄՊԻԱԴԱՅՈՒՄ

***Թբիլիսահայ, 18-ամյա Աննա Սաֆարովան ոսկե մեդալ նվաճեց Երեւանում անցկացված Հայաստանի եւ WADA Կովկասի Միջմայրցամաքային գավաթի պարային 5-րդ օլիմպիադայի եգիպտական պարերի մրցույթում:***

Թբիլիսիի Կովկասի համալսարանի, որը, իմիջիայլոց, գտնվում է մայրաքաղաքի Սվանեթիի թաղամասի՝ նախկին Ներսիսյան դպրոցի շենքում, տուրիզմի ֆակուլտետի ուսանողուհի Աննա Սաֆարովան մասնակցեց 16 եւ ավելի տարեկանների արաբական պարերի մրցույթին:

Օլիմպիադան անցկացվեց կատարողական արվեստի Համահայկական ասոցիացիայի եւ պարերի ալյանսի կազմակերպմամբ, պարի միջազգային կազմակերպության (IDO) հովանու ներքո: Պարային ստուգատեսին ներկայացվել էին տարբեր պարեր՝ սկսած ժողովրդականից եւ ավարտած հիպ-հոպով ու էլեկտրիկ բուգիով ու ռումբայով:

## ՄՐՑՈՒՅԹ

# ՄՈԴԵԼ ՆՈՒԿԱ ԿԱՐԱԼԱՇՎԻԼԻՆ՝ «ՄԻՍՍ ՎՐԱՍՏԱՆ-2015»



***«Միսս Վրաստան-2015» գեղեցկության մրցույթի հաղթող է դարձել 24-ամյա մոդել, թբիլիսցի Նուկա Կարալաշվիլին:***

«Միսս Վրաստան-2015»-ի եզրափակիչ փուլը անցկացվեց Բաթումիի երաժշտական կենտրոնի բեմահարթակում: Այս տարի երկրի գլխավոր գեղեցկուհու տիտղոսի համար պայքարում էին Վրաստանի տարբեր քաղաքներից ժամանած աղջիկներ:

Նուկա Կարալաշվիլին լավագույնն է ճանաչվել մրցույթի 21 մասնակիցների թվում: Նա դարձել է գլխավոր մրցանակի՝ Mini Cooper ավտոմեքենայի տերը: Բացի այդ, հաղթողը Վրաստանը կներկայացնի «Միսս աշխարհ», «Միսս Տիեզերք» եւ գեղեցկության այլ մրցույթներում:

Նուկա Կարալաշվիլին ավարտել է Թբիլիսիի Ի.Ջավախաշվիլու անվան պետական համալսարանի զբոսաշրջության ֆակուլտետը: Աղջիկը մոդելի բիզնեսում է 16 տարեկանից:

## ՖՈՒՏԲՈԼ

# ՆԱՀԱՆՋ՝ ՎԱՐԿԱՆԻՇԱՅԻՆ ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ




***Ֆուտբոլի միջազգային ֆեդերացիան (ՖԻՖԱ) հրապարակեց ազգային հավաքականների վարկանիշային հերթական աղյուսակը: Վրաստանի հավաքականը, նախորդի համեմատությամբ, դիրքերը զիջել է մեկ հորիզոնականով եւ ներկայիս աղյուսակում զբաղեցրել՝ 11-րդ տեղը:***

Ռեկորդային նահանջ է գրանցվել Հայաստանի ազգային հավաքականը: Այն ՖԻՖԱ-ի վարկանիշային նոր աղյուսակում նահանջել է միանգամից 36 հորիզոնականով եւ հայտնվել՝ 127 տեղում: Նշենք, որ 2012 թվականի հոկտեմբերին Վրաստանը 72-րդն էր, իսկ Հայաստանի թիմը ընդամենը երկու տարի առաջ՝ 2013 թվականի հուլիսին, վարկանիշային աղյուսակում 35-րդն էր:

Նշանակալի փոփոխություններ են կատարվել նաեւ աղյուսակի վերնամասում: Առաջին անգամ վարկանիշային աղյուսակում առաջատար դիրքեր զբաղեցրեց Բելգիայի հավաքականը: Ուժեղագույն տասնյակում տեղ են գրավել նաեւ Գերմանիան, Արգենտինան, Պորտուգալիան, Չիլին, Իսպանիան, Կոլումբիան, Բրազիլիան, Անգլիան եւ Ավստրիան:

Ռուսաստանի թիմը, առաջադիմելով երեք հորիզոնականով, նոր աղյուսակում հանգրվանել է 23-րդ տեղում, Ուկրաինայի թիմը, զիջելով դիրքերը, զբաղեցրել է 28-րդ տեղը: Ետընթաց է ունեցել նաեւ Ադրբեջանի հավաքականը: Նահանջելով 10 հորզոնականով՝ այն ներկայումս զբաղեցնում է 115-րդ տեղը:



# ԽԱՉԲԱՌ

**ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.** 1.Բագրատունի արքա: 5.Հայ գուսան: 8.Թբիլիսիի Պ.Ադամյանի անվան պետհայդրամայի թատրոնի երջանկահիշատակ դերասանուհի Շեկոյանը: 9.Հայ գրող ... Ահարոնյան: 11.«...ն եկավ լափին տալով»: 13.Կանխավ, նախօրոք: 16.Տղամարդու երգչական ձայն: 17.Նինո Միրզիաշվիլու պիեսը՝ «Եկեք պարենք ...»: 19.Հայտնի կոմպոզիտոր: 21.Ջութակի ստեղծողը՝ ... Պագանինի: 23.Մարդ, անձ (բրբ.): 25.Թուրքի տղան (ժող.): 29.«...յի տոնածառը»: 30.Քաղաք ՌԴ-ում՝ Մին...: 33.Ոչ որոշակի, անորոշություն: 34.Վիետնամական մազ, քուլ: 35.Մազի, վարսի: 36.Դաս տվող, ուսուցանող: 40.Իգական անուն: 43.Քանդուքարափ, քանդված, ավերված: 44.Դարբնոցում փչողը: 46.Ողջ, ամբողջ: 47.Կամերուն ...: 49.Թերի, կիսատ: 51.Հովհ.Թումանյան «Իմ ընկեր ...»: 53.Թիֆլիսյան եռալեզու գուսան Սայաթ-...: 54.Դավաճանություն, դավադրություն: 56.Կարող են լինել տեղի, ձեւի, ժամանակի: 58.Թբիլիսահայ դաշնակահար ... Աբովյան: 59.... ավազ, ... խիճ:

**ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.** 1.«Վրաստան» թերթի նախկին աշխատակցուհի ... Մկրտչյան: 2.Ծովագնաց ... Թասման: 3.Հերոսուհի Լեւոն Շանթի «Հին աստվածներ»-ում: 4.Փափուկ միս, կրծքամիս: 6.Շարք, տողան: 10.Հայկական էպոսը՝ «... ծռեր»: 12.Ոչ դրական, ոչ բացասական թիվ: 14.Անվանի ռուս կոմպոզիտոր ... Չայկովսկի: 15.Խորհրդային ղեկավար Կոբա Ջուղաշվիլին: 16.Տեղացի, ոչ եկվոր: 18.Խոտակեր կենդանի: 20.Ցուցական դերանուն: 22.Դու՝ ...: 24.Քաղցած, անոթի: 26.Քարի տեսակ: 27.Ոտքերի կամ ձեռքերի կոշտացած մաս: 28.Քաղաք ԱՄԷ-ում: 29.Խ.Աբովյանի գլխավոր հերոսը «... բալասի»: 31.Որոշակի մարդկանց խումբ: 32.Տատիկի թել մանող գործիքը: 33.Ոչ մեղավոր, արդարամիտ: 37.Տարիքով մեծը: 38.«... եւ խաղաղավանք»: 39.Վանքային համալիր Սյունիքի մարզում: 41.Քաջ, կտրիճ: 42.Թռչող սպասք: 45.Անվանի գրող Ժորժ ...: 46.Այրվեի, այրվեիր, ...: 47.Գետ Ուկրաինայում: 48.Հայ երիտասարդ երգիչ: 49.Լավաշի փուռ: 50.Թբիլիսիի Խոջիվանքի պանթեոնում թաղված հայ մեծ վիպասան: 52.Սեւանի ձկնատեսակ: 55.Վրա բառի հականիշը: 57.Տարի, 12 ամիս:

*Կազմեց ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԸ*

## ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

**ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.** 7.Անարխիա: 8.Սխեմա: 9.Բես: 10.Գառնի: 13.Հաագա: 18.Լվիճ: 19.Քանաքարա: 22.Բարաթ: 23.Կտավատ: 28.Նյասա: 29.Ուշունց: 32.Ուֆա: 33.Ուրար: 34.Ձլոտի: 37.Դուռ: 39.Խաթա: 41.Ձերծ: 44.Գոլֆ: 46.Ուրֆա: 47.Ծափ: 49.Վախ: 50.Խուբիլայ: 52.Դիակ: 54.Գոմեշ: 55.Ցեցե: 56.Տո: 57.Մայքլ: 58.Մացգ:

**ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.** 1.Ժայռ: 2.Ծխնի: 3.Սաբա: 4.ՀՍՍՀ: 5.Սելավ: 6.Գաճաճ: 11.Արաբ: 12.Նպար: 14.Ալթայ: 15.Գիլաս: 16.Բաթ: 17.ՄԱԿ: 20.Նավուր: 21.Քաղցր: 24.Տնազ: 25.Վասո: 26.Տատի: 27.Սուրու: 30.Շուրա: 31.Նաաս: 35.Լեզու: 36.Տորֆ: 37.Դրո: 38.Ռաֆայել: 40.Թափում: 42.Երեւի: 43.Ծածկոց: 44.Գրիշա: 45.Լվացք: 48.Ախոռ: 51.Բեմ: 52.Դեմ: 53.Ատր:


Խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105
Գ.Աքոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge
E-mail: vrastan@caucasus.net

Գրանցման վկայական
№ 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

"ВРАСТАН"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445